

Մերաբ Բարուխադիա

*Իվանե Ջավախիշվիլիի անվան
Թրիխսիի պետական համալսարան*

**ԵՐԿՐՈՐԴ ԼԵԶՎԻ ՈՉ ԱՍՏԻՃԱՆԱՅԻՆ ԱՐԱԳ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈՂԱԿԱՆ
ՅՈՒՐԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

Օրիգինալ չենք լինի այն մեթոդում, որը լայնորեն հաստատվում է ողջ աշխարհում, և որը բավարարում է արդիականության բոլոր չափորոշիչները և պահանջները: Մենք միայն փորձում ենք այն կիրառել վրաց «կենդանի» լեզվի արագ և արդյունավետ սովորելու հարցում: Դա թեզիսների ձևով այսպես ենք ձևակերպել. սովորենք արտահայտություններ և նախադասություններ և ոչ թե բառեր (բառարանային նյութի համար), ոչ մի քերականություն, շարունակական ունկնդրում (պարզից դեպի բարդը), ուսանման ութսուն տոկոսն այս դրույթին է շնորհվում, ձգտում դեպի խորքը, ոչ թե դեպի լայնքը, կամաց-կամաց, բազմանգամյա կրկնությամբ լսածի մտապահում: Կրկնություն 50-100 անգամ: Լսել > ճիշտ հասկանալ>կրկնել>հասցնել ինքնաբերական կիրառության: Լսել մինի տեքստեր և սերտել, դատել դրանց մասին ներկայում, անցյալում և ապառնիում (պատմել առանց քերականության) և փոխանցել բոլոր երեք դեմքերով և թվերով (նույնպես երեք ժամանակներում), տեքստերի ընթերցում ոչ թե դասագրքից, այլ տվյալ լեզվի իրական «կենդանի» տեքստերից, լսել ոչ թե տեքստ սիդիներ, այլ աուդիոգրքեր, միևնույն ժամանակ, անպայման ձեզ համար հետաքրքիր թեմաներով՝ միայն լսել: Միայն թե լսածի մեծ մասը պետք է հասկանանք, ինչն այն ավելի հետաքրքիր և հրապուրիչ կդարձնի:

Օտար լեզվի ուսուցման (արագ ուսուցման) մեթոդիկայից բազմաթիվ առաջնակարգ դասագրքեր կան գրված, որոնք, հաճախ, պատասխանում են ժամանակակից չափորոշիչներին, ինչը ապագայում վրաց լեզվի ուսուցման գործն առաջ կտանի և նրա կայուն հիմք կտա, որ ձևավորվի մեթոդիկայի հետագա հղկման-կատարելագործման համապատասխան բազա: Մակայն, նրա էական փոփոխություններ, գործնական կիրառության նպատակով, ըստ մեզ, միևնույն է անհրաժեշտ են: Դրա բանալին է **լեզվի գործնական կիրառության վրա** առավելագույն ուշադրության կենտրոնացումը: Դա մեզ թելադրել է ԹՊՀ-ում օստարալեզու ուսանողների հետ տարիների ընթացքում, և ներկայումս, կոնկրետ ադրբեջանալեզու ուսանողների հետ, աշխատելու փորձը: Պետք է ասել, որ մի քանի տասնյակ տարի առաջ հրատարակված քրեստոմատիաները և դասագրքերը չեն նախատեսում օտարալեզու ուսանողների և աշակերտների անհրաժեշտությունները

համապատասխան խորությամբ և համարժեքությամբ, քանի որ դրանք հիմնականում մայրենի լեզվի քերականական դասագրքեր էին հանդիսանում և հասկանալի է նույնիսկ, որ բազմաթիվ թերություններ էին պարունակում այդ տեսակետից: Ընդամենը մի քանի տարի է, ինչ այս հիմնախնդրի վրա արդյունավետ աշխատում են և, համապատասխանաբար, լավ օրիգինալ թե թարգմանված մեթոդական և գործնական դասագրքեր են ստեղծվել: Կարծում են, դրանց հետագա հղկում-զարգացումը կօգնի գործին, ինչի նպատակն էլ հանդիսանում է մեր աշխատությունը: Կաշխատենք թեզիսներով ձևակերպել մեր տեսակետները. **Թեզիս առաջին.** քանի որ վրաց լեզուն հարուստ է ածանցներով, որոնք յուրօրինակ և ուրիշ լեզուներից բավականին տարբեր բառակապակցություններ են ստեղծում, օտարալեզու ուսանողներին պետք է սովորեցնենք բառարան ստեղծել ոչ թե

բառերի այլ արտահայտությունների միջոցով: Օրինակ, սկսնակ ուսանողը գիտի հաշվել՝ յրտո, օրո, ևձո, օտեօ և այլն: Հարցնում ենք. „Րձս յձրօս յրտս մօջճմձցօտ յրտօ ձձ մօջճմձցօտ օրօ?“ առավելագույն դեպքերում պատասխանն այսպիսին է. „յրտս մօջճմձցօտ յրտօ ձձ մօջճմձցօտ օրօ յձրօս օտե-ձ“... և ոչ թե՝ օտե-և! Քերականորեն այդ բացատրելն արդյունավետ չէ լեզվի գործնական կիրառության տեսանկյունից, քանի որ քերականական կառույցը հասկանալը և սերտելը դեռ չի նշանակում նրա գործնական կիրառություն: Ավելին, այսպես սովորած նախադասությունը մոտորային խոսքի թշնամին է և կապակցված խոսքում երբեմն վերածվում են հիմնական խոչընդոտի, քանի որ ուսանողը մտածում է *կանոնի մասին* և ոչ թե *բովանդակության*, որն այն խորքից պետք է բխի առանց խոչընդոտի, ինչը կոչվում է հաճախ լսած և կրկնված ...

Առաջին թեզիսի գլխավոր կանխադրույթն են արտահայտությունները (կամ նախադասությունները) և ոչ թե բառերը: Սովորեք արտահայտությունները և մի խորացեք առանձին բառերի մեջ (նույնն է, ինչ բառը համատեքստում): Արտահայտություններ սովորելիս մի փոքր քերականություն ենք սովորում, չէ որ քերականությունը լեզվական իրականությունից «բխած» կանոններն են: Այն մեզ սովորեցնում է ինչպես ճիշտ դասավորենք այս բառերն իրար հետ: Օրինակ, գիտենք, որ „*օՆ*“ և „*մօօրօմձջՆ*“ միշտ միասին են: Օրինակ, „*օՆ* մօօրօմձջՆ ևձձձջլՆ“ նախադասության մեջ չի կարելի բայի մեջ „և“ –ն բաց թողնել՝ „*օՆ* մօօրօմձջՆ ևձձձջլՆ“: Կրկնում և կրկնում ենք. „*օՆ* մօօրօմձջՆ, *օՆ* մօօրօմձջՆ, *օՆ* մօօրօմձջՆ...“: Սա ճիշտ արտահայտություն է: Այս դեպքում չի կարելի իմանալ այն, թե սա ներկա է, թե անցյալ, առաջին, թե երրորդ դեմք: Միայն այն է անհրաժեշտ իմանալ, թե դրանք ինչ հաջորդականությամբ են միասին դրված: Իսկ դա ինչպե՞ս էք կարողանում: Ամենակարճ և ամենաճիշտ ճանապարհն է արտահայտություններ սովորելը բազմակի կրկնության միջոցով: Այսպիսով, երբ

կհայտնաբերեք նոր, ձեզ անծանոթ բառ, դուրս գրեք այդ բառի հետ և այդպես կազմեք բառարան: Կամ ամբողջությամբ նախադասությունը դուրս գրեք, կամ նրա մեջ եղած բառակապակցությունը և ոչ թե առանձին բառը: Երբ կանդրադառնաք ձեր բառարանին, կրկնելիս կհամոզվեք արտահայտությունների և նախադասությունների առավելության մեջ: Բացի այդ, սա լեզու սովորելու ավելի կարճ ուղի է, քանի որ դուք տիրապետում եք ոչ թե առանձին բառերի, այլ բառերի խմբերի:

Եթե բառերն առանձին-առանձին սովորեք, դա բնական ճանապարհ չի լինի, քանի որ խոսելիս չենք կարող առանձին բառերով սահմանափակվել, այլ՝ բառերի խմբերով: Զե՞ որ մենք արտահայտություններով ենք խոսում: Երեխաներն էլ ամբողջական նախադասություններ և բառաշարքեր են լսում և այդպես խոսում մայրենի լեզվով: Նրանց առանձին բառեր չեն սովորեցնում: Հենց սկզբից գիտեն, թե ինչ է նշանակում այս կամ այն արտահայտությունը և հնարավոր է չգիտենան բոլոր բառերի նշանակությունը, սակայն ճշգրտորեն են հասկանում արտահայտության իմաստը: Համեմատաբար ուշ ավելի շատ արտահայտությունների են տիրապետում և հասկանում են որոշակի բառերի իմաստներ:

Սա համեմատաբար կարճ ուղի է առանձին բառերի արագ տիրապետման համար և խոսելու լավագույն ուղի: Եթե խոսելիս մտածեք բառերի մասին, ձեր խոսքը կդանդաղի և տվյալ լեզվով բնական չէք խոսի: Դրա լավ օրինակ է անգլերեն տեքստի ռոբոտ ընթերցողը: Չնայած նրան, որ այն ճգրտորեն է արտահայտում յուրաքանչյուր բառը, նրա կողմից ընթերցված կապակցված խոսքը հեռու է բնական անգլերեն խոսքից: Դա հարուցում է ոչ բնական դադարը առանձին բառերի միջև, իսկ այդպիսի դադարներ գոյություն ունեն ոչ թե բառերի միջև, այլ՝ արտահայտությունների: Ահա, թե ինչը կլինեք բնական:

Այսպիսով, դա կբարձրացնի խոսքի տեմպը: Որքան արտահայտություն սովորեք, նույնպիսի արագությամբ կխոսեք: Համապատասխանաբար, ձեր խոսքն ավելի բնական կդառնա: Տեսնո՞ւմ

էք, թե որքան բան կշահի ուսանողը: Սա լեզու սովորելու հզոր և ավելի պարզ միջոց է:

Ինչպե՞ս իրականացնենք այդ: Նոր նախադասություններ կարդալիս արտահայտությունները միշտ ամբողջությամբ դուրս գրեք: Երբ կրկնելու համար կանդրադառնաք, դուք արտահայտությունները կկրկնեք, այլ ոչ թե բառը: Լեզվին տասն անգամ ավելի արագ կտիրապետեք: Ամեն ինչ կշտկվի՝ ներառյալ ձեր քերականությունը:

Երկրորդ թեզիսն է՝ մի սովորեք քերականություն: Այս թեզիսը, իհարկե, վերաբերում է ուսուցման նախնական փուլին ... Օտար լեզվի տիրապետման ժամանակ սա կարևորագույն կանոնն է: Սկսենք այնտեղից, որ խորհրդային դպրոցական համակարգը միատեսակացված էր և տարիներ շարունակ (առնվազն 5-րդ դասարանից) օտար լեզու էր դասավանդվում: Սովորում էին բազմաթիվ տեքստեր՝ իրենց քերականությամբ, բառերով, սակայն, ինչ: Բավական էր ժամաներ մի օտարերկրացի և նրա հետ չէին կարող շփվել և հաղորդակցություն հաստատել: Չէինք կարող հասկացնել և չէինք հասկանում (ուրիշ ինչ է օտար լեզվի իմացությունը), այսինքն՝ դպրոցը չէր կարող կատարել գլխավոր խնդիրը և անհրաժեշտ էին կրկնուսույցներ և տարիներ շարունակ անհատական աշխատանք: Այսպես շարունակվում էր նաև բարձրագույն ուսումնական հաստատությունում, և արդյունքը նույնպիսին էր: Այդքան աշխատանքը և էներգիան, և որ ամենակարևորն է ժամանակը ջուրն էին թափվում ...

Այստեղ մենք ինքներս պետք է խոստովանենք և հարցնենք՝ կարո՞ղ ենք արդյոք ուսանման լեզվով (անգլերեն, վրացերեն և այլն) կապակցված և արագ, հեշտ և ինքնաբերաբար խոսել: Չէ՞ որ դուք լեզվի այսպիսի տիրապետում եք ցանկանում: Պատասխանն այսպիսին է. Ոչ ճիշտ ճանապարհով էինք գնում ... Ինչն էր դրա պատճառը:

Չենք քերականության վրա արված չափից ավելի շեշտադրումն է բերել այսպիսի արդյունքների: Անընդհատ քերականական կանոններ սովորելն է այսպիսի արդյունքի հասցրել:

Ուսուցիչների ցուցումները և առաջադրանքն այսպիսն էր՝ քերականական կանոնները լավ պետք է սովորեիք, դուք էլ ստիպված էինք դրա վրա երկար ժամանակ վատնել: Սա ունի նաև երկրորդ վատ արդյունքը, մարդկանց մեծ մասն այսօր էլ հավատում է քերականական կանոնների մեծ նշանակությանը երկրորդ լեզվի ուսանման հարցում:

Ինչու չպետք է սովորենք քերականություն: Բազմաթիվ աշխատություններ էր նվիրվել նրան, որ քերականության ուսուցումն իրականում թուլացնում է ձեր խոսողական հմտությունները: Սկսում եք այդ լեզվով խոսել և մտածում եք այն քերականական կանոնների մասին, որոնցով լի է ձեր գլուխները: Փոխանակ փորձեք ինքնաբերաբար խոսել, աշխատում եք հիշել քերականական կանոնները: Սա արդեն ինքնաբերական խոսք չէ: Ահա, մեկն այն հիմնական պատճառներից, որի հետևանքով չենք կարող ինքնաբերաբար խոսել: Ոչ հեշտ եք կարողանում խոսել, ոչ էլ ինքնաբերաբար:

Գրելու դեպքում մտածելու համար ունեք բավականին ժամանակ: Կարող եք դանդաղ կամ չափից ավել դանդաղ գրել: Տարբեր միջոցներով ուղղեք սխալները՝ ինքներդ ձեր սխալներն ուղղեք, գրքից օգտվեք, օգնություն խնդրեք ընկերոջից կամ ուսուցչից: Սակայն, խոսելիս, ինչպես գիտեք, չունեք այդքան ժամանակ: Եթե որևէ մեկը ձեզ հարց է տալիս, նա անհապաղ պատասխանի է սպասում: Պետք է համոզված լինեք, նրան պատասխանելիս, ձեր պատասխանի ճշտության մեջ:

Ուրեմն, ինչպե՞ս սովորենք քերականորեն ճիշտ խոսել: Այստեղ ելքն ունկնդրման մեջ է: Երբ լսում եք, կռահում եք, թե ճիշտ է արդյոք խոսքը և չեք մտածում, թե որ ժամանակում է դրված այս կամ այն նախադասությունը: Լսում եք միայն այն, թե ինչպես է հնչում այս կամ այն նախադասությունը, ինչպես է ճիշտ արտասանվում և երբ խոսել կսկսեք, կօգտագործեք ճիշտ քերականական ձևը: Սա ուղիներից մեկն է արագ, հեշտ և արդյունավետ խոսելու:

Երրորդ թեզիսն ամենակարևորն է՝ լսելը: Անսահման քանակությամբ լսելն

անչափ կարևոր է և, միննույն ժամանակ, լեզվի արդյունավետ տիրապետման ամենահեշտ ուղին է ... Ռուսաց լեզվին մենք ոչ թե դպրոցում, այլ բակում խաղալիս, ֆիլմերով, ռադիոյով և այլ տեղեկատվական միջոցներով էինք տիրապետում: Չնայած նրան, որ դպրոցում նրա ուսուցման դրվածքը վատ չէր:

Լեզուն սովորիքի ականջով և ոչ թե աչքով:

Երբ սովորում եք դասագրքից, տիրապետում եք քերականական կանոնների: Համապատասխանաբար, ավելի շատ քերականական կանոններ կիմանաք, քան, օրինակ՝ ինքն անգլիացին (որը, շատ հնարավոր է, ընդհանրապես չի սովորել քերականություն), որը չի սովորել այդ կանոնները: Անգլալեզու մարդը հնարավոր է ոչ էլ լսի այս կանոնները: Նրանք, ուղղակի բնական են խոսում, ուրեմն՝ խոսելիս ոչ ոք չի մտածում քերականական կանոնների մասին, քանի որ դրա համար, ուղղակի, ժամանակ չի մնում:

Քերականական կանոնները հաճախ գրքի մի քանի էջ են ընդգրկում: Խոսելիս դրանց մասին մտածելը մեզ շատ հեռու կտաներ, և դա նույնիսկ խոչընդոտ կլիներ: Ուրեմն, քերականական կանոններն ուղղակի չեն աշխատում: Իսկ ի՞նչն է աշխատում: Լսելը և կրկին լսելը, մինչև այն հեշտանա և բարձրանա ինքնաբերական մակարդակի: Սա շատ հզոր մեթոդ է, ահա, թե ինչպես են երեխաները տիրապետում լեզվին՝ լսելով: Երկու տարի, և լսելով խոսել են սկսում:

Շատերին զայրացնում է այն, որ օտար լեզվով չեն կարողանում ճիշտ խոսել: Սակայն լավ խոսելը լավ լսելուց է գալիս: Չորսից մինչև վեց ամիս լսել է անհրաժեշտ, միայն լսելու վրա կենտրոնանալ և մի անհանգստացեք խոսելու համար ... Դուք կկարողանաք անել այդ, սակայն մի ստիպեք ձեզ: Մի անհանգստացեք, եթե սխալներ եք թույլ տալիս: Վեց ամիս լսեք և լսեք: Եթե ավել լսեք, ավելի լավ:

Լսելիս երկու կարևորագույն բան պետք է հիշենք. առաջինն այն է, թե **ինչպես ենք լսում**: Պետք է համոզվեք, որ դա պարզ լեզու է: Նվազագույն բարդության լեզու: Շատ եք ցանկանում

նրա առավելագույնը հասկանալ: Մի խոսքով, եթե տեսեք, որ ունկնդրման նյութը անհասկանալի է, թողեք այն և գտեք հեշտը: Երկրորդ՝ լսեք անսահման քանակությամբ, ժամանակի մեջ անսահմանափակ:

Չորրորդ թեզիսն է՝ խորը սովորել: Այս լեզուն վերածիր քո մի մասի: Դա ինքնաբերական խոսքի բանալիներից մեկն է: Ինքնաբերական խոսքի մեջ ենթադրվում է առանց մտածելու խոսելը: Ոչ մի թարգմանություն գլխում, ոչ մի քերականական կանոն: Միայն խոսեք: Մի մտածիր, մի ջանա, այնպես ինչպես մայրենի լեզու սովորելիս անհրաժեշտ չէ այն: Այնտեղ չես զգում դժվարություն: Այն չափից ավելի հեշտ է: Ուզո՞ւմ ես որևէ բան ասել: Ասա: Ոչ մի մտածել: Ամբողջ խնդիրը դպրոցի և դպրոցական դասագրքերի մեջ է, քանի որ մեզ ամեն ինչը հակառակն էին սովորեցնում: Դասագրքերում շատ բան էիք սովորում կանոնների հետ, բազմաթիվ բառարանային բառեր և քերականական կանոններ: Դրանք բավականին արագ էլ յուրացրել եք և այժմ իրականում լավ չեք էլ հիշում: Կարող եք ասել, որ լավ գիտեք քերականություն, կարող ասեք, որ լավ եք տիրապետում այս բառերին: Սակայն, արդյոք գիտե՞ք դրանք իրականում: Քանի որ երբ ասում եմ **գիտեմ**, ենթադրում եմ նաև այն, որ այս գիտելիքը կարող եմ արագ, հեշտ և ինքնաբերաբար կիրառել: Առանց մտածելու կարող եք օտար քերականությունը կիրառել: Այնպես լավ գիտեք բառերը, որ ինքնաբերաբար խոսեք: Կրկին և կրկին ոչ մի մտածել, թարգմանել, միտքը դանդաղեցնել, դադար խոսելիս: Ոչ մի տարօրինակ ընդմիջում:

Այսպիսով, այս հիմնախնդիրները ունեք և այսպես էլ պետք է լինի, չէ՞ որ դպրոցում եք սովորել (նաև բարձրագույն ուսումնական հաստատությունում): Ինչ լավ էիք տիրապետում դասագրքերին և մտածում էիք՝ ինչ լավ եմ սովորում, հոյակապ է, - և տրվում էիք ինքնաբավության: Խնդիրն այն է, որ խորը չէիք սովորում, և դա իրական սովորել չէր: Թեստերը և քննությունները նույնպես հանձնում էիք հոյակապ. սակայն օտարալեզուների հետ խոսելիս ոչինչ չէիք կարողանում անել, կամ էլ ծայրահեղ

դեպքում սարսափելի շեշտադրմամբ և թույլ:

Ինչպես սովորենք խորը: Սա հեշտ, սակայն հզոր միջոց է: Խորը ուսանումը բազմանգամյա, անսահման քանակությամբ կրկնությունն է ենթադրում: Կարծում եմ, մեկ դասը մեկ շաբաթ պետք է շարունակվի: Նրանում 50 բառ պետք է լինի: Կտրվի մեկ գրույց կամ մաս (տրված բառերի քանակի նախատեսմամբ՝ չպետք է գերազանցի 50-ը): Այնուհետև կտրվի մինի-դասախոսություն /տեքստ: Նրանում ևս նույն բառերը և արտահայտություններն են կրկնում: Կրկնում են և կրկնում: Այնուհետև տրվում է բառարանային մասը, որտեղ նույն բառերը և արտահայտությունները նորից են կրկնում, կրկնում և կրկնում: Չեք ձանձրանա, քանի որ նույն բառերը կլսեք տարբեր իրավիճակներում, տարբեր կերպ և տարբեր դասերով: Այդ պատճառով էլ պետք է անընդհատ կրկնել: Ինչ են կարծում, քանի անգամ պետք է լսեք նոր բառ-արտահայտությունը, որպեսզի մտապահեք և կիրառեք: Առնվազն 30 անգամ, որպեսզի խորը սովորեք և կիրառեք ինքնաբերաբար: Նախ՝ նկատի ունենք դրանք լսելը և ճիշտ հասկանալը: Եվ դա պետք է շարունակվի այնքան ժամանակ, մինչև այն չխորանա: Սա միայն ունկնդրում չէ, սա խորքային ունկնդրում է, կրկին և կրկին, նորից և նորից: 20 անգամ լսելուց հետո կկարծեք, թե ոչինչ տեղի չի ունենում, հասկացա, սակայն ամեն ինչ նույնն է: Որովհետև խորը պետք է լսեք: Կարծես, սկզբից ոչինչ տեղի չի ունենում, սակայն հանկարծ՝ «պայթյուն», և բառերն ինքնաբերաբար կգան, զարմանալի զգացողություն է: Սա հենց այն է, ինչ ձեզ էր անհրաժեշտ:

Ուրեմն, խորը սովորեք և կրկնեք: Կրկնեք և կրկնեք այն, ինչը կլսեք: Ամեն օր գոնե յոթ անգամ և նույնիսկ ավելի:

Հինգերորդ թեզիսը կապվում է երկրորդի հետ: Ինչո՞վ պետք է փոխարինենք քերականությունը, որպեսզի ճիշտ խոսենք: Դա մինի տեքստի /պատմվածքի մասին տեսակետ է: Միայն թե, շատ փոքր չափսի հեշտ պատմվածք: Մենք բազմաթիվ տարբեր տեսակետներ պետք է լսենք այս մինի-տեքստի շուրջ: Չորս-հինգ նախադասությունից բաղկացած տեքստը բազմիցս պետք է

լսենք և համոզվենք, որ դուք այն հասկանում եք: Տեքստը ներկայով է ներկայացված: Առաջինը, որ կանենք, անցյալ ժամանակ կտեղափոխենք: Այս տարբերակը ևս լավ կհասկանանք, շատ կլսենք և բազմիցս կկրկնենք: Սա գործնական քերականություն է, որ ձեզ տրվում է առանց կանոնների և տեսության: Ձեզ անհրաժեշտ է միայն լսել, հասկանալ տարբերությունը դրանց միջև և կրկնել և կրկնել: Այժմ արդեն անցնում ենք մեկ տարի հետո տեղի ունեալիք իրադարձություններին (ապառնի ժամանակ): Սա արդեն երրորդ ժամանակն է: Սկսում են կրկնել երեք տարբերակով էլ: Ակնհայտ կտեսնեք, թե ինչպես է փոխվում այս պատմվածքի յուրաքանչյուր տարբերակը:

Այնուհետև տեղափոխենք տարբեր դեմքեր և ցույց տանք, թե որքանով է փոխվում միևնույն տեքստը դեմքերով տարբեր կերպ: Լսեք և լսեք, մինչև դրանց հասկանալը: Ոչ մի դեպքում չմտածեք, թե որ դեմքում է և որ ժամանակում և այլն: Ուղղակի լսեք և կրկնեք տեքստը հասկանալի: Սա հեշտ և արդյունավետ ուղի է: Առանց քերականական կանոնների և դրանք անգիր անելու սովորում ենք քերականական կանոնները: Միևնույն ժամանակ կհամոզվեք, որ ճիշտ են խոսում:

Վեցերորդ թեզիսը կվերաբերի իրական նյութի օգտագործմանը: Արդեն նշեցինք, որ պետք է վերջ տաք դասագրքերի օգտագործմանը: Ինչ ենք ենթադրում իրական նյութի օգտագործման մեջ: Դա մայրենի լեզվով խոսող մարդն է և այն, ինչ նա կիրառում է իրական խոսքում: Օրինակ, լավ է, եթե շատ կարդաք սովորելու լեզվով, սակայն դասագրքեր չկարդաք: Համոզվեք, որ այն հեշտ է կարդալու համար և օրիգինալ է: Սակայն ընտրեք այն, ինչը ձեզ շատ է հետաքրքրում: Նաև չլսեք մարդկանց, որոնք խաղում են իրական իրավիճակ, երկխոսություն, քանի որ դա նորմալ, իրական լեզու չէ: Միայն բնական խոսք լսեք, միևնույն ժամանակ ձեզ հետաքրքիր թեմաներով: Աուդիոգրքերը ևս հոյակապ ուղի է լեզու լսելու համար, միայն թե լսեք գրքեր ձեզ հետաքրքրող թեմաներով: Այնքան հեշտ պետք է լինի, որ պետք է հասկանաս հարյուր տոկոսով: Իսկ եթե

սկսեք մանկական աուդիոգրքերի ունկնդրումից, դա բոլորից լավ տարբերակը կլինի: Այստեղ ևս պետք է համոզված լինեք, որ հասկանում եք համարյա հարյուր տոկոսը: Լսեք և լսեք անվերջ, մինչև առաջ չշարժվեք և անցեք պատանեկան գրականության ունկնդրման: Նույնպես անվերջ լսեք և լսեք, մինչև բավականին չհեշտանա ձեզ համար և անցեք ավելի բարդ մակարդակի: Արդեն ականջն ընտելացած կարող եք լսել լուրեր, հեռուստա- և ռադիոհաղորդումներ, դիտել և լսել ֆիլմեր, շոուներ:

Չենց իրական, կենդանի նյութով կտիրապետեք կենդանի լեզվին: Դասագրքերը պաշտոնական լեզուն են տալիս և հիմնականում գրել են սովորեցնում: Դասագրքերում տրված բառապաշարը և ոճը միայն գրավոր խոսք է ուսուցանում: Երբ լսում եք կենդանի լեզուն և այն սովորում, դուք տիրապետում եք այն լեզվին, որն ամենօրյա կյանքում, նորմալ գրույցի ժամանակ ենք կիրառում: Սա հենց այն է, ինչպես խոսում ենք, ինչպես իրականում արտաբերում ենք կամ կիրառում բառերը: Սրանք իրական արտահայտություններ են:

Այսպիսով, հիշենք. միայն իրական նյութեր և ոչ թե դասագրքեր կամ սիդի սկավառակների և երիզների վրա տեղադրված արհեստական ունկնդրման նյութ: Սա զվարճալի կանոն է, որը ձեզ հնարավորություն կտա գտնել այնպիսի նյութ, ինչը ձեզ հետաքրքրում է: Խոստովանենք, որ դասագրքերը հետաքրքիր չեն: Ավելին, որպես օրենք, ձանձրալի: Ուրեմն, գտեք իրական ունկնդրման և իրական ընթերցանության նյութ, որը ձեզ հետաքրքիր է և անպայման ձեր մակարդակին համապատասխան, որպեսզի հասկանաք:

Յոթերորդ թեզիսը վերաբերում է լսածի և նրա շուրջ տրված հարցերին պատասխանելուն: Մտածում եք արդյոք իրական խոսքի մասին, ի՞նչ է տեղի ունենում իրական կյանքում: Մովորաբար, նրանում բազմաթիվ հարցեր և բազմաթիվ պատասխաններ են տրված: Հազվադեպ է լինում, որ մեկ մարդ խոսի, և մյուսը միայն լսի: Մովորաբար այսպիսի գրույցը փոխադարձ է՝ մեկը գրուցում է մյուսի հետ և ընդհակառակը: Մեկը հարցեր է տալիս,

և մյուսը պատասխանում, այսպես շարունակվում է հարց-պատասխանի ռեժիմում: Ջրույց, հարց, պատասխան, - ահա իրական գրույցը, որ տեղի է ունենում անընդհատ: Միննույն ժամանակ, երբ ականջը լսում է, գիտակցությունը սթափ է, քանի որ հարցը պասսիվ չէ: Երբ հարցը լսում եք, ինչ որ բան պետք է անեք: Մտքում տրված լեզվով եք մտածում, հասկանում եք և պատասխանն էլ տվյալ լեզվով եք տալիս: Դա անչափ կարևոր է նրա համար, որ հասկանանք՝ լեզվական գործունեությունը անչափ ակտիվ գործողություն է: Համապատասխանաբար, այսպիսի ակտիվ ճանապարհով պետք է սովորենք նաև օտար լեզուն: Ձեր գիտակցությունն արագ է աշխատում, և անհամեմատ արագ էլ սովորում եք, երբ շատ հարցեր եք կիրառում, իսկ դրա համար կիրառում ենք այս պատմվածքները: Լսելով, ինչպես ասացինք, պետք է լսեք և լսեք, սակայն այժմ մի փոքր տարբեր բան ենք անում: Լսում ենք և պատմվածքների շուրջ տրված հարցերին պատասխանում: Մենք հարցեր ենք տալիս տեքստի շուրջ: Անչափ շատ հարց: Դա նրա համար, որ սովորելու լեզվով մտածեք: Այս հարցերով հենց դա ենք սովորում: Սրանով սովորում եք շարունակաբար, արագ մտածել այս լեզվով:

Առաջինը, որ պետք է արվի՝ հեշտ հարցեր տալն է: Դա ևս շատ կարևոր է: Եթե այդպես չարվի և բարդ հարցեր տրվեն, շատ կմտածեք, և դա ժամանակի մեջ կերկարաձգվի: Դուք դանդաղ կմտածեք, և հնարավոր է նույնիսկ մայրենի լեզվի անցնեք և այնպես թարգմանեք և տաք պատասխանները: Այդ պատճառով այս պատմվածքների շուրջ բազմաթիվ հարցեր կտանք և արագ պատասխաններ, թեպետ, շատ, շատ հեշտ հարցեր: Այնքան հեշտ, որ անմիջապես հասկանաք, և ձեր պատասխանն էլ շատ արագ լինի: Արագությունն անչափ կարևոր բաղադրամասն է այս պատմվածքների: Պատասխանելիս մեկ կամ երկու բառ եք օգտագործում: Դրանք ամենակարճ պատասխաններն են: Պետք չէ մեծ նախադասություններով պատասխանել: Պետք չի լինի մտածել քերականության մասին: Ընդհանրապես, ուրիշ ոչինչի մասին չեք մտածի ... Ձեր միտքը

կրնտելացնէք օտար լեզվով շատ արագ հասկանալուն և ընդհանրապէս պատասխանելուն: Կհասկանաք շատ արագ և համապատասխանաբար կպատասխանէք: Այդ պատճառով էլ կրնտելացնէք այս առանձնահատուկ տեքստերին հարց-պատասխանի կարգով:

Կրկնում ենք, հարցերը շատ կարճ պատասխաններ պետք է ենթադրեն սկզբում: Սա հեշտագույն տեխնիկա է, բայց շատ արդյունավետ: Առանձնապէս այն ժամանակ, եթե մի քանի ամիս եք օգտվում նրանից: Ջարմանալի արդյունքներ է բերում: Աստիճանաբար ձեր խոսքն արագանում է, և սկսում եք այդ լեզվով մտածել: Կհայտնաբերէք, որ մի հոյակապ օր արագ հասկանում եք և ուղղակի խոսում այդ լեզվով: Ոչ մտածում եք, ոչ էլ թարգմանում: Լսում եք և խոսում՝ զարմանալի զգացում է պարտւում ձեզ:

Ինչպէ՞ս հորինէք կամ կազմէք այսպիսի պատմություն: Սովորելու լեզվով

խոսողին խոսեցնէք և դիկտոֆոնով ձայնագրէք: Անընդհատ լսէք: Ամեն անգամ լսում եք հարցը և դուք պատասխանում: Շատ հեշտ է, սակայն էֆեկտիվ:

Մեր ուսուցման մեթոդը և դասերը միայն իրական լեզու սովորել կլինի իրական համատեքստով: Բնարկէ, մեր առաջարկված դասերում հավաքված և կարգավորված կլինի ամեն ինչ, ինչի մասին խոսեցինք վերևում: Բոլոր դասերը կունենան պատմվածքներ՝ հարց-պատասխանով: Բոլոր թեմաները քերականական հաջորդականությամբ՝ առանց քերականության: Բոլորը կունենան բառարանային բաժին՝ փոխանցված արտահայտություններով: Նրանցից յուրաքանչյուրը կունենա աուդիո, ունկնդրման նյութ իրական խոսքից, որը կլսէք և կլսէք: Բոլոր յոթ թեզիսները բոլոր դասերում լիարժեքորեն պետք արտացոլվեն:

Merab Babukhadia

Ivane Javakhishvili Tbilisi State University

Methodological features of a second language teaching

ABSTRACT

Will not be the original in our method, which was widely established in the world and satisfied all the modern needs and meet standards. We try to use them only in the modern Georgian language, in the study of Georgian language real quick and effective. This thesis is established in the form: learn phrases and suggestions, not words (for dictionary material) any grammar, reading constantly (from simple to complex) in this study eighty percent of thesis is given, to the depth and width, not to aspiration. Slow - by slowly recurring refrain heard multiple Remember. Repeat 50-100 - yet. Hearing>understanding>repeat>to automatically speech; mini - texts reading and learning; discussion on them in the present, past, and who (in the grammar without the tell) and all three persons and transmission the number (as well as the three time); text's question is not a textbook, but given from real texts of this language literature, not reading the text C-Ds, but the podcast, you will listen to audio-books interesting topics - just listen! But only big part of listening material should understand that it will make interesting and attractive. After moving to a youth age, and more advanced (the only real texts). After radio and movies, the question around text and answers from easy to difficult, etc.